# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

<<28>> սեպտեմբերի 2023 թ. քաղաք Մարալիկ

2023 թվականի սեպտեմբերի 28-ին ժամը $17^{00}$–ին ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալի քաղաքում, Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում /հասցե՝ մարզ Շիրակ Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց թիվ 1/ տեղի ունեցավ Հայաստան Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու հերթական նիստը:

Համայնքի ավագանու նիստը վարում էր Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանը:

Նիստն արձանագրում էր՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հարությու Համբարյանը:

Զեկուցողը նշեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, համայնքի ավագանու հերթական երկրորդ նստաշրջանը սկսվում է սեպտեմբերի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև դեկտեմբերի վերջին չորեքշաբթին: Նստաշրջանի ընթացքում յուրաքանչյուր ամիս հրավիրվում է ավագանու առնվազն մեկ նիստ: Համաձայն համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 7-Ա որոշման, համայնքի ավագանու նստաշրջանների գումարման համայնքի ավագանու հերթական նիստերի անցկացման օր է սահմանվել յուրաքանչյուր ամսի վերջին հինգշաբթին, այսինքն այսօր՝ սեպտեմբերի 28-ին:

Հայտարարվեց, որ Անի համայնքի ավագանու 21 անդամներից, համայնքի ավագանու հերթական նիստին մասնակցում են 11-ը:

Նիստին մասնակցում էին՝ <<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ,
2. ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
3. ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆԸ,
4. ԷԴԻԿ ՌՈՌՈՒՏՅԱՆԸ
5. ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆԸ,
6. ՀԱՍՄԻԿ ՋԱՏԻԿՅԱՆԸ,
7. ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆԸ,
8. ԳՈՌ ԱՂԱԲԵԿՅԱՆԸ
9. ԺԻՐԱՅԻ ԱԼԵՔՅԱՆԸ

10. ՆԱԻՐԱ ՍԱՐՈՅԱՆԸ,

11. ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆԸ:

Համայնքի ավագանու նիստին անհարգելի բացակայում էին՝

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱՐՏԱԿ ՍԱՎԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ,
2. ԱՎԵՏԻՔ ԱՐՏՈՒՇԻ ՆԱԶԱՐՅԱՆԸ,
3. ԿԱՏՅԱ ՋԻՎԱՆԻ ՆԱԽՇՔԱՐՅԱՆԸ,
4. ՆԱՐԵԿ ԳԵՎՈՐԳԻ ՆԻԿՈՅԱՆԸ,
5. ԶԱՎԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ,
6. ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿԻ ՄԿՈՅԱՆԸ,
7. ԱՆՆԱ ՀԱԿՈԲԻ ԱՎԴԱԼՅԱՆԸ:

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱԳՈՒՆ ՎԱՐԴԱՆԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
2. ԳԱՅԱՆԵ ԳԱՌՆԻԿԻ ԱՎԵՅԱՆԸ:

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ՝ Անի համայնքի ավագանու անդամ՝

1. ԱՐՄԵՆԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԻ ՆԱԶԱՐՅԱՆԸ:

Նիստին մասնակցում էին Անիի համայնքապետարանի աշխատակազմի պատասխանատու աշխատակիցներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքային ենթակայության կազմակերպությունների տնօրեններ, համայնքի ներկայացուցիչներ:

Նիստը վարող՝ Արման Սարիբեկյանը համայնքի ավագանուն տեղեկացրեց, որ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին:

Տեղեկացվեց, որ Անի համայնքի ավագանու 21 անդամներից համայնքի ավագանու նիստին մասնակցում են 11-ը, այսինքն քվորումն ապահովված է:

Անի համայնքի ավագանու հերթական նիստը հայտարարվեց բացված:

Զեկուցողը նշեց, որ ավագանու անդամներին սահմանված կարգով և ժամկետներում տրամադրվել են համայնքի ավագանու այսօրվա հերթական նիստի օրակարգի, օրակարգային հարցերի ավագանու որոշումների նախագծերը:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց Անի համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգի նախագիծը.

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 202 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 202 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 17-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անիի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտակա եկամուտների հաշվառման, հավաքագրման և գնումների բաժնի պետի ժամանակավո պաշտոնակատար Ա. Սաղաթելյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՔ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ 25.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ 5 /ՀԻՆԳ/ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈ <<ԻՆՈՀԱԲ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈՒՐԱԿԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՎ ԱՆՑՆՈՂ ՓՈՂՈՑՈՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՊՈՒՐԱԿԻ ՍՊԱՍԱՐԿՄԱ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՔ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԼԱՆՋԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ 3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ԵՐԿՈՒ/ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ <<ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՔԻ ՏԵՂԱԿԱ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ <<ԱՐԱԳԱԾ ՀՈՎԻՏ>> ՏԵՂԱԿԱՆ ԱԿՏԻՎ ԽՄԲԻ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔ ՖԵԼԻՔՍ ՁԵՐԺԻՆՍԿՈՒ ԱՆՎԱՆ ՓՈՂՈՑԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ 28-Ի N 43-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔԱՎՈ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 202 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 25-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 202 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 13-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 202 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 13-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0022- ԿԱԴԱՍՏՐԱՅԻ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.00199 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԺԻՐԱՅՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱ ԴԱՏԱՐԱՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՎՃՌՈՎ /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾ ՇԴ3/0554/02/18/ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/2 ՀԱՍՑԵՅՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹՌՉՆԱՆՈՑԻ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08-049-0226-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.545253 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

14) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ /ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԼԱՆՋԻԿ/ ՀՅՈՒՍԻՍ ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 3-Ր ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ Մ-1, ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԹԱԼԻՆ-ԼԱՆՋԻԿ ՀԱՏՎԱԾԻ ՄՈՒՏՔԵՐ

ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ 1 ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

15) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-022-0152-001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 6.99513 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՍԱՐԺ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

16) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ-ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒ ՆԵՐԱՌՎԱԾ ԲԱԳՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-022-0109-0020 ԿԱԴԱՍՏՐԱՅԻ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.04 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

17) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ /ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ/ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՎՐՈՒՅ ԳԱԼՈՒՍՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

18) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ **2023-202** ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյան/

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու նիստի օրակարգը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով հաստատվեց համայնքի ավագանու նիստի օրակարգը:

Զեկուցողը հայտարարեց, որ անցնում են օրակարգի հարցերի քննարկմանը:

**Օրակարգ-2**

## 2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 202 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 17-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Օրակարգի հարցը ներկայացնելու համար ձայնը տրվեց Անիի համայնքապետարան աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման գնումների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյանին:

Եթե որոշման նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրում ե ներկայացնել:

Առաջարկությամբ հանդես եկավ համայնքի ավագանու անդամ՝ Էդիկ Ուռուտյանը.

Առաջարկություն ներկայացվեց, որ համայնքի բյուջեյում փոփոխություն կատարելու վերաբերյա ավագանու որոշման նախգիծ ներկայացնելիս, պարտադիր ներկայացնել հիմնավորու համապատասխան հոդվածնեում փոփոխություն կատարելու վերաբերյալ:

Ներկայացված առաջարկությունն ընդունվեց և պարտավորոցվեց Անիի համայնքապետարան աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման գնումների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Սաղաթելյանին հետագայու նմանատիպ հարցերի քննարկման ժամանակ ներկայացնել համապատասխան հիմնավորում:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանr որոշումը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 17-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությա օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստան Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ի կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնք ղեկավարի առաջարկությունը.

### Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվական մայիսի 12-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2023 թվական բյուջեի հաստատման մասին>> N 17-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Համայնքի բյուջեի վարչական մասի եկամտային մասի 7331 (Այլ դոտացիաներ տողի << 0> թիվը փոխարինել <<9158.8>> թվով:

2) Համայնքի բյուջեի ֆոնդային մասի եկամտային մասի 7332 ( Պետական բյուջեից կապիտա ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (Սուբվենցիաներ)) տողի <<0>> թիվ

փոխարինել <<144185.1>> թվով:

3) Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 03, դաս 01 (Սուբվենցիան ջրամատակարարում) և տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինություննե կառուցում) հոդվածի <<0>> թիվը փոխարինել << 98526.3>> թվով, 51 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<1678.5>> թվով:

4) Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 03, դաս 01 ( Ջրամատակարարում) տնտեսագիտական դասակարգման 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածի <<3707.0 թիվը փոխարինել <<6707.0>> թվով:

5) Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 02, դաս 01 (Գյուղատնտեսություն) տնտեսագիտական դասակարգման 4111 (Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարնե հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<9158.8>> թվով, 4241 (Մասնագիտական ծառայություննե հոդվածի <<1000.0>> թիվը փոխարինել <<700.0>> թվով :

6) Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 01, դաս 01 (Ապարատի պահպանմա ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդված <<1000.0 >> թիվը փոխարինել <<2000.0>> թվով, 5113 (Շենքերի և շինությունների կապիտա նորոգում) հոդվածի <<5000.0 >> թիվը փոխարինել <<20000.0 >> թվով, 5122 (Վարչակա սարքավորումներ) հոդվածի <<5000.0>> թիվը փոխարինել <<8000.0>> թվով:

7) Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 01, դաս 01 (Բնակարանային շինարարություն և տնտեսագիտական դասակարգման5134 (Նախագծահետազոտական ծախսեր) հոդվածի << 0> թիվը փոխարինել << 2500.0>> թվով:

8) Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 02, դաս 03 (Մշակույթի տան պահպանմա ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 5122 (Վարչական սարքավորումներ) հոդվածի < 1000.0 >> թիվը փոխարինել << 1975.0>> թվով:

9) Գործառական դասակարգման բաժին 09 խումբ 05, դաս 01 (Երաժշտական դպրոց պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 5122 (Վարչական սարքավորումներ հոդվածի <<350.0>> թիվը փոխարինել <<650.0>> թվով:

10) Գործառական դասակարգման բաժին 04 խումբ 03, դաս 02 (Նավթամթերք և բնական գազ) տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածի <<0>> թիվ փոխարինել <<4000.0>> թվով:

11) Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 01 (Ընդհանուր բնույթի հանրայի ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4823 (Պարտադիր վճարներ) հոդված <<500.0>> թիվը փոխարինել <<800.0>> թվով:

12) Գործառական դասակարգման բաժին 01 խումբ 06, դաս 01 (Սուբվեն ընդհանուր բնույթ հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 5121 (Տրանսպորտայի սարքավորումներ) հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<43980.3>> թվով:

13) Գործառական դասակարգման բաժին 11, խումբ 01, դաս 02 (Պահուստային ֆոնդ) տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի <<39350.0>> թիվ փոխարինել <<18975.0>> թվով, այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստայի ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ տողի <<45643.0>> թիվը փոխարինել <<59018.0>> թվով:

14) Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 05, դաս 01 (Ճանապարհային տրանսպորտ և տնտեսագիտական դասակարգման 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) հոդված

<<25000.0>> թիվը փոխարինել <<4000.0>> թվով, 5134 (Նախագծահետազոտական ծախսե
հոդվածի <<4530.0>> թիվը փոխարինել <<9530.0>> թվով:

15) Գործառական դասակարգման բաժին 05, խումբ 01, դաս 01 (Անի կոմունալ տնտեսությ պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 5121 (Տրանսպորտայ սարքավորումներ) հոդվածի <<1000.0>> թիվը փոխարինել <<3600.0>> թվով:

16) Գործառական դասակարգման բաժին 05, խումբ 03, դաս 01 (Սան. մաքրում) տնտեսագիտական դասակարգման 5122 (Վարչական սարքավորումներ) հոդվածի <<0>> թի փոխարինել <<1000.0>> թվով:

17) Գործառական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (Սոցիալական հատո արտոնություններ (Այլ դասերին չպատկանող)) և տնտեսագիտական դասակարգման 472 (Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից) հոդվածի <<1100.0>> թիվը փոխարին <<1600.0>> թվով, 4729 (Այլ նպաստներ բյուջեից) հոդվածի <<8000.0>> թիվը փոխարին <<10500.0>> թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը

**Օրակարգ-3**

**3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՌՆԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ 25.85 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ 5 /ՀԻՆԳ/ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ <<ԻՆՈՀԱԲ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել <<Ինոհաբ երիտասարդական կենտրոն> հասարակական կազմակերպության նախագահ՝ Ա. Մարգարյանը՝ կազմակերպությա գործունեությունը իրականացնելու համար Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի վարչակա շենքից աշխատասենյակ տրամադրելու հարցի վերաբերյալ:

Կազմակերպությունը շահույթ չի հետապնդում և Սառնաղբյուր բնակավայրի երիտասարդությա շրջանում իրականացնում է ուսուցման և բնակավայրի զարգացմանն ուղղված գործունեություն:

Նախագծով նախատեսվում է համայնքի սեփականությունը հանդիսացող Սառնաղբյու բնակավայրի վարչական շենքի 25.85 քառակուսի մետր մակերեսով աշխատասենյակը անհատույց, /հինգ/ տարի ժամկետով օգտագործման տրամադրել <<Ինոհաբ երիտասարդական կենտրոն> հասարակական կազմակերպությանը:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանո որոշումը:

Անցնում կատարվեց օրակարգի հաջորդ հարցին.

**Օրակարգ-4**

**4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՔԻ ՄԱՐԱԼԻ**

**ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈՒՐԱԿԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՎ ԱՆՑՆՈՂ ՓՈՂՈՑՈ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՊՈՒՐԱԿ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծի նախաձեռնությունը տրվել է Անի համայնքի ավագանու <<Քաղաքացիական պայմանագիր>> կուսակցության <<Անի>> խմբակցության կողմից, որ կապակցությամբ Անի համայնքի Մարալիկ քաղաքում 2023 թվականի օգոստոսի 30-ին անցկացվել հանրային լսումներ և տրվել է համաձայնություն Մարալիկ քաղաքի քաղաքային պուրակի հյուսիսայի մասով անցնող փողոցով տրանսպորտային միջոցների երթևեկության փակելու և այն պուրակ սպասարկման տարածքում ներառել համար:

Քաղաքային պուրակի հյուսիսային մասով անցնող փողոցով տրանսպորտային միջոցներ երթևեկության կազմակերպումը անվտանգության տեսակետից մեծ վտանգ է առաջացնու քաղաքային պուրակում հանգստացող քաղաքացիների և հատկապես մանկահասակ երեխաներ համար, իսկ Նշված փողոցը փակելու արդյունքում չի խաթարվում Հր. Շահինյան-Մադաթյա փողոցները կապող տրանսպորտային միջոցների երթևեկությունը, քանի որ այն իրականացվում Հաղթանակի փողոցով:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանո որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈՒՐԱԿԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՎ ԱՆՑՆՈՂ ՓՈՂՈՑՈՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՊՈՒՐԱԿԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությա օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.3-րդ կետ դրույթներով, հաշվի առնելով որ Մարալիկ քաղաքի քաղաքային պուրակի հյուսիսային մասո անցնող փողոցով տրանսպորտային միջոցների երթևեկության կազմակերպումը անվտանգությա տեսակետից մեծ վտանգ է առաջացնում քաղաքային պուրակում հանգստացող քաղաքացիների հատկապես մանկահասակ երեխաների համար, իսկ Նշված փողոցը փակելու արդյունքում չ խաթարվում Հր. Շահինյան-Մադաթյան փողոցները կապող տրանսպորտային միջոցներ երթևեկությունը, քանի որ այն իրականացվում է Հաղթանակի փողոցով, հիմք ընդունելո Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու <<Քաղաքացիակա պայմանագիր>> կուսակցության <<Անի>> խմբակցության նախաձեռնությամբ Հայաստան Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում անցկացված հանրայի լսումների արդյունքների վերաբերյալ կազմված 2023 թվականի օգոստոսի 30-ի արձանագրությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայքի Մարալիկ քաղաքի քաղաքայի պուրակի հյուսիսային մասով անցնող փողոցով արգելել տրանսպորտային միջոցների երթևեկություն և այն ներառել պուրակի սպասարկման տարածքում:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայքի ղեկավար Արմա

Սարիբեկյանին.

ա) Ապահովել տրանսպորտային միջոցների երթևեկությունը արգելված փողոցի ճանապարհայի երթևեկության համապատասխան նշանների տեղադրումը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Անցնում կատարվեց օրակարգի հաջորդ հարցին.

**Օրակարգ-5**

**5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԼԱՆՋԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ 3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՐԿՈՒ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ԵՐԿՈՒ/ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ <<ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել <<Համայնքի երիտասարդներ> համայնքային զարգացման հասարակական կազմակերպության նախագահ՝ Նելլի Վարդանյան Լանջիկ բնակավայրում <<Հոլեմ>> ինովացիոն կրթական կենտրոնի ստեղծման դրամաշնորհայի ծրագիրը իրականացնելու համար Անի համայնքի Լանջիկ բնակավայրի վարչական շենքում տարած տրամադրելու վերաբերյալ.

Ծրագրի նպատակն է՝ ստեղծել ինովացիոն կենտրոն, որտեղ մասնագիտական կրթությա ուսուցման միջոցով հնարավոր կլինի ակտիվացնել և զարգացնել մարզի ծայրամասայի բնակավայրը:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստան Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթով և նախատեսվում է Ան համայնքի սեփականությունը հանդիսացող Լանջիկ բնակավայրի վարչական շենքի ընդամենը 3 քառակուսի մետր մակերեսով երկու աշխատասենյակը անհատույց, 2 /երկու/ տարի ժամկետո օգտագործման տրամադրել <<Համայնքի երիտասարդներ>> համայնքային զարգացմա հասարակական կազմակերպությանը:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանո որոշումը:

Անցնում կատարվեց օրակարգի հաջորդ հարցին.

**Օրակարգ-6**

**6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՔԻ ՏԵՂԱԿԱ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ <<ԱՐԱԳԱԾ ՀՈՎԻՏ>> ՏԵՂԱԿԱՆ ԱԿՏԻՎ ԽՄԲԻ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել <<Արագած Հովիտ>> տեղական ակտի խմբի համակարգող Նելլի Վարդանյանը՝ տեղական զարգացման ռազմավարության իրականացման գործու Անի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների հետ անդամակցություն հաստատել

առաջարկությամբ:

Ակտիվ խմբի նպատակն է գործընկերության զարգացման միջոցով դրամական միջոցներ ներգրա համայքի սոցիալական և տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնելու և ակտիվ խ բազայի հիման վրա ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու համար:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստա Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթով

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագա որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ <<ԱՐԱԳԱԾ ՀՈՎԻՏ>> ՏԵՂԱԿԱՆ ԱԿՏԻՎ ԽՄԲԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթով, հաշվի առնելով <<Արագած Հովիտ տեղական ակտիվ խմբի համակարգող Նելլի Վարդանյանի 2023 թվականի սեպտեմբերի 5 դիմումը՝ <<Արագած Հովիտ>> տեղական ակտիվ խմբի կողմից տեղական զարգացմ ռազմավարության իրականացման գործում անդամակցության առաջարկության մերաբերյալ.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայն տեղական ինքնակառավարման մարմինների՝ <<Արագած Հովիտ>> տեղական ակտիվ խմ անդամակցությանը և գործընկերային հարաբերությունների հաստատմանը:

2. <<Արագած Հովիտ>> տեղական ակտիվ խմբի հետ անդամակցության գործընթաց համակարգողի լիազորությունները վերապահել Անիի համայնքապետարանի աշխատակազ զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժին առաջատա մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար՝ Վահագն Սարոյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Անցնում կատարվեց օրակարգի հաջորդ հարցին.

**Օրակարգ-7**

**7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՖԵԼԻՔ ՁԵՐԺԻՆՍԿՈՒ ԱՆՎԱՆ ՓՈՂՈՑԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 43-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկուցողը նշեց, որ Համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 23-ի N 43-Ա որոշմամ Մարալիկ քաղաքի Ֆելիքս Ձերժինսկու անվան փողոցը վերանվել է հայազգի ռազմակա գործիչ, Հայաստանի զինված ուժերի գեներալ-մայոր, Արցախյան ազատամարտի մասնակից

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախկին փոխնախարար, Հայաստանի ազգա
հերոս, Արցախի հերոս, արմատներով Անի համայնքի Նորշեն գյուղից /նախկինում Խարկով/՝ **Արկա
Տեր Թադևոսյանի** անվամբ:

Ընդունված որոշմամբ չի ապահովվել Հայաստանի Հանրապետության կառավարության 20 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվե վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարմ կարգի>> պահանջները, համաձայն որի՝ մինչև նոր հասցեների տրամադրումը, հարցը պետք համաձայնեցնել ՀՀ կադաստրի կոմիտեի հետ և ստանալ շտրիխ կոդ:

Այդ կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել ավագանու նույն հարցին վերաբերվ ընդունված որոշումը ճանաչել ուժը կորցրած և ընդունել նոր որոշում:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագան որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՖԵԼԻՔՍ ՁԵՐԺԻՆՍԿՈՒ ԱՆՎԱՆ ՓՈՂՈՑԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 43-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք 18-րդ հոդվածի 1-ին մասի, 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 200 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված <<Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվել վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարմա կարգի>> 4-րդ և 16--րդ կետի 2-րդ ենթակետի, 19-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտեր մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ի մասի դրույթներով, հիմք ընդունելով 2023 թվականի հունիսի 26-ին Անի համայնքի Մարալի քաղաքում անցկացված հանրային լսումների արդյունքները և Հայաստանի Հանրապետությա կադաստրի կոմիտեի անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը /Ծածկագի 080036RFPCH4/.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաք <<Ձերժինսկի փողոցը>> վերանվանել հայազգի ռազմական գործիչ, Հայաստանի զինվա ուժերի գեներալ-մայոր, Արցախյան ազատամարտի մասնակից, Հայաստանի Հանրապետությա պաշտպանության նախկին փոխնախարար, Հայաստանի ազգային հերոս, Արցախի հերու արմատներով Անի համայնքի Նորշեն գյուղից /նախկինում Խարկով/՝ Արկադի Տեր Թադևոսյան անվամբ՝ **<<Արկադի Տեր-Թադևոսյան փողոց>>**:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք ավագանու 2023 թվականի հունիսի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ան համայնքի Մարալիկ քաղաքի Ֆելիքս Ձերժինսկու անվան փողոցը անվանափոխելու մասին>> N 43-l

որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Անցնում կատարվեց օրակարգի հաջորդ հարցին.

**Օրակարգ-8**

**8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔԱՎՈ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկուցողը նշեց, որ որոշմամբ նախատեսվում է Անի համայնքի 2023 թվականի բյուջեից 238500 /երկու միլիոն երեք հարյուր ութսունհինգ հազար/ ՀՀ դրամ դրամական օգնություն տրամադրել Ան համայնքի թվով 91 կարիքավոր ընտանիքների:

Որոշման ընդունման համար հիմք են հանդիսացել կարիքավոր ընտանիքնե համայնքապետարան ներկայացված դիմումները և Անի համայնքի ղեկավարի 2023 թվակա հունիսի 20-ի N 196-Ա որոշմամբ ստեղծված Շիրակի մարզի Անի համայնքի սոցիալական հարցե հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի եզրակացությունը:

Եթե որոշման նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրում ներկայացնել:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագան որոշումը:

Անցնում կատարվեց օրակարգի հաջորդ հարցին.

**Օրակարգ-9**

**9) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 25-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունման անհրաժեշտությունն առաջել է այն հանգամանքով, համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրա մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող տրանսպորտային միջոցների, մեխանիզմնե և սարքավորումների միջոցով ծառայություններ մատուցելու դիմաց 2023 թվականի համար գանձւ վճարների դրույքաչափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ա համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 5-ի N 28 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> 25-Ն որոշման մեջ նախատեսված չէ, համայնքի սեփականություն հանդիսացող <<ԲԵԼՈՌՈՒՍ մակնիշի տրակտորի միջոցով ծառայություններ մատուցելու դիմաց դրույքաչափեր, որը համայն բնակչության և կազմակերպությունների կողմից ունի մեծ պահանջարկ:

Նախագծով նախատեսվում են ծառայությունների մատուցման հետևյալ դրույքաչափերը՝

| Հ/հ | Համայնքի կողմից մատուցվող ծառայության տեսակը, անվանումը | Սահմանված դրույքաչափերը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 7. | <<ԲԵԼՈՌՈՒՍ>> մակնիշի տրակտորի միջոցով ծառայությունների | X |

| | | |
|---|---|---|
| | մատուցման դիմաց /առանց դիզելային վառելանյութի ծախսի/ | |
| | Մինչև 8 /ութ/ ժամ տևողության ծառայության դիմաց, յուրաքանչյուր 1 /մեկ/ ժամվա դիմաց | 6 000 |
| | 1 /մեկ/ օր 8-ժամյա տևողությամբ ծառայության դիմաց | 45 000 |
| | 10 օր և ավելի տևողությամբ ծառայության դիմաց՝ յուրաքանչյուր օրվա համար | 36 000 |

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագա որոշումը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 25-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3- կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությ Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող <<ԲԵԼՈՌՈՒՍ>> մակնիշի տրակտոր միջոցով համայնքի բնակչությանը և կազմակերպություններին ծառայություններ մատուցելու պահանջարկը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվական մայիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցների, մեխանիզմների և սարքավորումների միջոցո ծառայություններ մատուցելու դիմաց 2023 թվականի համար գանձվող վճարների դրույքաչափեր սահմանելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 202 թվականի ապրիլի 5-ի N 28 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 25-Ն որոշման մե կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշմամբ հաստատված հավելածի 6-րդ կետից հետո ավելացնել նոր <<7-րդ>> կետ հետևյա խմբագրությամբ՝

| Հ/հ | Համայնքի կողմից մատուցվող ծառայության տեսակը, անվանումը | Սահմանված դրույքաչափերը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 7. | <<ԲԵԼՈՌՈՒՍ>> մակնիշի տրակտորի միջոցով ծառայությունների մատուցման դիմաց /առանց դիզելային վառելանյութի ծախսի/ | X |
| | Մինչև 8 /ութ/ ժամ տևողության ծառայության դիմաց, յուրաքանչյուր 1 /մեկ/ ժամվա դիմաց | 6 000 |
| | 1 /մեկ/ օր 8-ժամյա տևողությամբ ծառայության դիմաց | 45 000 |
| | 10 օր և ավելի տևողությամբ ծառայության դիմաց՝ յուրաքանչյուր օրվա համար | 36 000 |

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Անցնում կատարվեց օրակարգի հաջորդ հարցին.

**Օրակարգ-10**

**10) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 202 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 13-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունման անհրաժեշտությունն առաջացել է <<Անի կոմուն տնտեսություն>> համայնքային բյուջետային հիմնարկի աշխատանքների կանոնակարգման սուբվենցին ծրագրի շրջանակներում ձեռք բերված բազմաֆունկցինալ էքսկավատորի շահագործմ համար էքսկավատորի մեխանիզատորի հաստիքի ավելացմամբ:

Նախագծով նախատեսվում է հիմնարկի <<Կոմունալ տնտեսության պատասխանատուների հաստիքները կրճատել 2-ով և ավելացնել էքսկավատորի մեխանիզատորի նոր հաստիք Փոփոխության արդյունքում հիմնարկի աշխատավարձի ծախսերը նվազում են:

Եթե որոշման նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրում ներկայացնել:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագան որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 13-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությա օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հեդվածի 1-ին և 4-ր մասերի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվական ապրիլի 28-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքայ հիմնարկների, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածք աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատել մասին>> N 13-Ա որոշման N 9 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Հավելվածի վերնագրում նշված <<111>> թիվը փոխարինել <<110>> թվով:

բ) 19-րդ կետի 3-րդ սյունակի <<10>> թիվը փոխարինել <<8>> թվով, իսկ նույն կետի 6-ր սյունակի <<1 300 000>> թիվը փոխարինել <<1 040 000>> թվով:

գ) 34-րդ կետի 3-րդ սյունակի <<1>> թիվը փոխարինել <<2>> թվով, իսկ նույն կետի 6-րդ սյունակ

<<230 000>> թիվը փոխարինել <<460 000>> թվով:

դ) 19-րդ, 20-րդ և 21-րդ կետերի 2-րդ սյունակում նշված <<Ջրագծի փականագործ>> բառ փոխարինել <<Կոմունալ տնտեսության պատասխանատու>> բառակապակցությամբ:

ե) Վերջին՝ <<ԸՆԴԱՄԵՆԸ>> տողի 2-րդ սյունակում նշված <<111>> թիվը փոխարինել <<11 թվով, իսկ 5-րդ սյունակում նշված <<16  005 000>> թիվը փոխարինել  <<15975000>> թվով:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Անցնում կատարվեց օրակարգի հաջորդ հարցին.

**Օրակարգ-11**

**11) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 13-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հարգելի գործընկերներ, որոշման ընդունման անհրաժեշտությունն առաջացել է հանգամանքով, որ ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի << Մարալիկի երաժշտական դպրոց համայնքային ոչ առևտրային կազմակերպության ժողովրդական գործիքների, դհոլի, դաշնամուր լարային գործիքների խմբակներ հաճախող սաների թիվը ավելացել է 48-ով և անհրաժեշտությու առաջացել հաստիքացուցակում ավելացնել չորս միավոր դասատուի հաստիք: Կարծում եմ ողջուն է, որ երաժշտական դպրոց հաճախող, հատկապես ժողովրդական գործիքների խմբակներ, սան թիվը ավելացել են:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագա որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 13-Ա ՈՐՈՇՄԱՆ  N 4 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդկետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 4- մասերի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ա համայնքի << Մարալիկի երաժշտական դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությ ժողովրդական գործիքների, դհոլի, դաշնամուրի և լարային գործիքների խմբակներ հաճախ սաների թիվը ավելացել է 48-ով և անհրաժեշտություն է առաջացել հաստիքացուցակում ավելացն չորս միավոր դասատուի հաստիք.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին Որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվական ապրիլի 28-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի  մարզի Անի համայնքի համայնքայի

հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առեվտրային կազմակերպություններ կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափեր հաստատելու մասին>> N 13-Ա որոշման N 4 հավելվածում կատարել հետևյալ փոփոխություններն լրացումները.

ա) Հավելվածի վերնագրում նշված <<21>> թիվը փոխարինել <<25>> թվով:

բ) 12-րդ կետի 3-րդ սյունակի <<1>> թիվը փոխարինել <<2>> թվով, իսկ նույն կետի 6-րդ սյունակ <<104000>> թիվը փոխարինել <<208000>> թվով:

գ) 15-րդ կետի 3-րդ սյունակի<<1>> թիվը փոխարինել <<2>> թվով, իսկ նույն կետի 6-րդ սյունակ <<104000>>թիվը փոխարինել<<208000>>թվով:

դ) 16-րդ կետի 3-րդ սյունակի <<1>> թիվը փոխարինել <<2>> թվով, իսկ նույն կետի 6-րդ սյունակ <<104000>> թիվը փոխարինել <<208000>> թվով:

ե) 17-րդ կետի 3-րդ սյունակի<<1>>թիվը փոխարինել <<2>> թվով, իսկ նույն կետի 6-ր սյունակի<<104000>>թիվը փոխարինել<<208000>>թվով:

զ) Վերջին՝ <<ԸՆԴԱՄԵՆԸ>> տողի 2-րդ սյունակում նշված <<21>>թիվը փոխարինել<<25> թվով, իսկ 5-րդ սյունակում նշված <<2277000>> թիվը փոխարինել <<2693000>> թվով:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Անցնում կատարվեց օրակարգի հաջորդ հարցին.

Օրակարգի 12-18-րդ հարցերը ներկայացման համար ձայնը տրվեց Անի համայնքի ղեկավար տեղակալ Զորիկ Խաչատրյանին

**Օրակարգ-12**

**12) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0022- ԿԱԴԱՍՏՐԱՅԻ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.00199 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԺԻՐԱՅՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել քաղաքացի Ժիրայր Հովհաննես Ալեքյանիը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Մարալիկ քաղաքի Հր. Շահինյա փողոցի 204/2 հասցեում գտնվող բնակելի տան պահպանման ու սպասարկման համա նախատեսված բնակելի կառուցապատ հողամասին հարակից 08-003-0022- կադաստրայի ծածկագրով 0.00199 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակել կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, բնակելի տան մուտք աստիճանահարթակ կառուցելու և մուտքը սպասարկելու համար, որպես ընդլայնում իրեն վաճառել խնդրանքով:

Հողամասի ուղղակի վաճառքը բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարությա

2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-3-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանվ չափորոշիչները և կարգավորվում է Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստան Հանրապեթության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետությ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 2-րդ մասի, Հայաստան Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286 որոշմամբ հաստատվ «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» րդ կետի դրույթներով:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագան որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0022-0077 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.00199 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԺԻՐԱՅՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱԼԵՔՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապեթության օրենք 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-ր հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 200 թվականի մայիսի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականությու հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1 ին կետի 1-3-րդ, 6-րդ, 7-րդ ենթակետերը և նկատի ունենալով, որ քաղաքացի Ժիրայր Հովհաննես Ալեքյանին /հետագայում՝ քաղաքացի/ սեփականության իրավունքով պատկանող Հայաստան Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան փողոց, 204/ հասցեում գտնվող բնակելի տան պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003 0022-0066 կադաստրային ծածկագրով 0.04 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակայի նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության բնակելի կառուցապա հողամասին /Վկայական՝ 30122022-08-0041/ հարակից 08-003-0022-0077 կադաստրայի ծածկագրով 0.00199 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակել կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /Վկայական 20092023-08-002( հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողոց, թիվ 204/3 հողամա հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկություններ միջոցով, ընդառաջելով քաղաքացու 2023 թվականի սեպտեմբերի 1-ի դիմումին.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաշվի առնելով, որ քաղաքացի Ժիրայր Հովհաննեսի Ալեքյանին սեփականության իրավունքո պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հր Շահինյան փողոց, 204/2 հասցեում գտնվող բնակելի տան պահպանման ու սպասարկման համա նախատեսված 08-003-0022-0066 կադաստրային ծածկագրով 0.04 հեկտար մակերեսո բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնակա նշանակության բնակելի կառուցապատ հողամասին հարակից 08-003-0022-0077 կադաստրայի ծածկագրով 0.00199 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակել կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /Վկայական 20092023-08-002(

հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Հր. Շահինյան փողոց, թիվ 204/3 հողամ որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, Հայաստ Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-3-րդ, 6-րդ րդ ենթակետերով սահմանված չափորոշիչների հիմքով, այդ հողամասը ուղղակի կարգով, տ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 (մեկ) քառակուսի մետրը՝ 792 (յոթ հարյուր իննսունե Հայաստանի Հանրապետության դրամ, 0.00199 հեկտար հողամասի համար **15761** /տասնի հազար յոթ հարյուր վաթսունմեկ/ Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճ քաղաքացի Ժիրայր Հովհաննեսի Ալեքյանին (անձնագիր՝ AV 0465296, տրված՝ 06.10.2022թ, 0 կողմից, բնակության հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Շիրակացու փո տուն 39)՝ բնակելի տան սպասարկման համար ավտոմեքենայի կանգառ կառուցելու և մու սպասարկելու նպատակով:

3. Նշել, որ

1) օտարվող հողամասը չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակությ քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

2) հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպան շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

3) օտարվող հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 6 րդ հոդվածով սահմանված հողերի կազմում:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արմ Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմաված կարգով քաղաքացու հետ կնք սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սու որոշիմից բխող իրավունքների պետական գրանցումը:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Զեկուցողը անցավ օրակարգի հաջորդ հարցին:

**Օրակարգ-13**

**13) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱ ԴԱՏԱՐԱՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՎՃՌՈՎ /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾ ՇԴ3/0554/02/18/ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ 1-Ի ՓՈՂՈՑ, ԹԻՎ 2/2 ՀԱՍՑԵՅՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹՌՉՆԱՆՈՑԻ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ Ո ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08-049-0226-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈ 0.545253 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՏԱՎԱԶԴ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկուցողը նշեց, որ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվական սեպտեմբերի 25-ի վճիռը /քաղաքացիական գործ՝ ՇԴ3/0554/02/18/՝ ՀՀ Շիրակի մարզի Անի համայնք Լուսաղբյուր բնակավայրի 1-ին փողոց թիվ 2/2 հասցեում գտնվող թռչնանոցի շինության նկատմամ ձեռքբերման վաղեմության իրավունքի ուժով ճանաչվել է քաղաքացի Հովհաննես Արտավազդ Մանուկյանի սեփականության իրավունքը և վերջինս դիմել համայնքապետարան շինությա պահպանման ու սպասարկման համար նախատեսված 0.545253 հեկտար մակերեսով հողամաս /կադաստրային ծածկագիր՝ 08-049-0226-0007 / իրեն վաճառելու խնդրանքով:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստան

Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետությ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 2-րդ մասի դրույթներով:

Նախագծով նախատեսվում է Անի համայնքի Լուսաղբյուր բնակավայրի 1-ին փողոց թիվ 2 հասցեում գտնվող թռչնանոցի շինության պահպանման ու սպասարկման համար նախատեսվ համայնքի սեփականություն հանդիսացող 08-049-0226-0007 կադաստրային ծածկագր արդյունաբերության, ընդերքօգտագործմանև այլ արտադրական նշանակության օբյեկտնե նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնակ նշանակության 0.545253 հեկտար մակերեսով հողամասը, ուղղակի վաճառքով, տվյալ հողամա կադաստրային արժեքի չափով, ընդամենը՝ 774 260 (յոթ հարյուր յոթանասունչորս հազար երկ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ արժեքով վաճառել քաղաքացի Հովհաննես Արտավազդի Մանուկյանին:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագան որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 201 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՎՃՌՈՎ /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ՇԴ3/0554/02/18/ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 2/2 ՀԱՍՑԵՅՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹՌՉՆԱՆՈՑԻ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08-049-0226-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.545253 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետությա օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողայի օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 201 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը /քաղաքացիական գործ՝ ՇԴ3/0554/02/18/՝ Հայաստան Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լուսաղբյուր բնակավայրի 1-ին փողոց թիվ 2/ հասցեում գտնվող թռչնանոցի շինության նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով քաղաքաց Հովհաննես Արտավազդի Մանուկյանի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ, հաշվ առնելով քաղաքացու 2023 թվականի հուլիսի 31-ի դիմումը՝ շինության պահպանման ու սպասարկմա համար նախատեսված 0.545253 հեկտար մակերեսով հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 08 049-0226-0007 / իրեն վաճառելու մասին.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 201 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռով /քաղաքացիական գործ՝ ՇԴ3/0554/02/18/՝ քաղաքաց Հովհաննես Արտավազդի Մանուկյանի սեփականության իրավունքը ճանաչված Հայաստան Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լուսաղբյուր բնակավայրի 1-ին փողոց թիվ 2/ հասցեում գտնվող թռչնանոցի շինության պահպանման ու սպասարկման համար նախատեսվա համայնքի սեփականություն հանդիսացող 08-049-0226-0007 կադաստրային ծածկագրո արդյունաբերության, ընդերքօգտագործմանև այլ արտադրական նշանակության օբյեկտներ նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնակա

նշանակության **0.545253 հեկտար** մակերեսով հողամասը, ուղղակի վաճառքով, տվյալ հողամա կադաստրային արժեքի չափով, ընդամենը՝ **774260 (յոթ հարյուր յոթանասունչորս հազար երկ հարյուր վաթսուն)** Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքա Հովհաննես Արտավազդի Մանուկյանին (անձնագիր՝ AV 0677157, տրված՝ 16.03.2023 թվականի 099-ի կողմից, հաշվառման հասցեն՝ քաղաք Գյումրի, Գ. Նժդեհի հրապարակ, շենք 4, բնակարան 7)

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արմե Սարիբեկյանին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացի Հովհաննե Արտավազդի Մանուկյանի հետ /այսուհետև՝ քաղաքացի/ կնքել սույն որոշման 1-ին կետո նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել անշարժ գույքի նկատմամ իրավունքների պետական գրանցումը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

Զեկուցողը անցավ օրակարգի հաջորդ հարցին:

**Օրակարգ-14**

**14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ /ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԼԱՆՋԻԿ/ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 3-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ Մ-1, ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԹԱԼԻՆ ԼԱՆՋԻԿ ՀԱՏՎԱԾԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ 1-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ա հանգամանքով, որ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-ծրագիր 3- շրջանակներում Մ-1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակությա ավտոմոբիլային ճանապարհի Թալին-Լանջիկ հատվածի մուտքերի կառուցման համար հողեր օտարման և տարաբնակեցման ծրագրի լրացում 1-ի շրջանակներում հանրության գերակա շա ճանաչված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող մեկ կտոր հողամասը, օրենքով սահմանված կարգով հաշվարկված փոխհատուցմա գնով, անհրաժեշտ է օտարել Հայաստանի Հանրապետությանը:

Որոշման ընդունումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66 րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստան Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հանրության գերակա շահեր ապահովման նպատակով սեփականության օտարման մասին>> Հայաստանի Հանրապետությա օրենքի դրույթներով

Եթե որոշման նախագծի վերաբերյալ կան առաջարկություններ և դիտողություններ խնդրում ե ներկայացնել:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագ
որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ /ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԼԱՆՋԻԿ/ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 3-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ Մ-1, ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ-ՎՐԱՍՏ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԹԱԼԻՆ-ԼԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱ ԼՐԱՑՈՒՄ 1-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մ 11-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրե 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հանրության գերակա շահերի ապահովման նպատա սեփականության օտարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, հ ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի 1274-Ն որոշմամբ հաստատված <<Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումա ծրագրի-ծրագիր 2-ի հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը>> և N 1 և N հավելվածների պահանջները,

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Տալ համաձայնություն, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագ ծրագիր 3-ի շրջանակներում Մ-1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակությ ավտոմոբիլային ճանապարհի Թալին-Լանջիկ հատվածի մուտքերի կառուցման համար հողե օտարման և տարաբնակեցման ծրագրի լրացում 1-ի շրջանակներում հանրության գերակա շ ճանաչված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությու հանդիսացող հողամասը, օրենքով սահմանված կարգով հաշվարկված փոխհատուցման գն օտարել Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արմ Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմաված կարգով պետական լիազ մարմնի հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի օտարման պայմանագիր ապահովել սույն որոշիմից բխող իրավունքների պետական գրանցումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Զեկուցողը անցավ օրակարգի հաջորդ հարցին:

**Օրակարգ-15**

**15) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-022-0152-0019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐ**

**6.99513 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՍԱՐ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարմա մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետո Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, 81-րդ հոդվածի 3 րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 28 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասեր տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով:

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսացել ՀՀ տարածքային կառավարման ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի հունիսի 20-ի <<ՍԱՐԺ ԳՐՈՒՊ>> սահմանափա պատասխանատվությամբ ընկերությանը օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք տրամադրման մասին>> թիվ 1111-Ա հրամանը, <<ՍԱՐԺ ԳՐՈՒՊ>> սահմանափա պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված օգտակար հանածոյի արդյունահանմա 2023 թվականի հունիսի 20-ի ՇԱԹ-29/708 թույլտվությունը, N Լ-708 լեռնահատկացման ակտը Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով կնքված 2023 թվականի հունիսի 20- ընդերքօգտագործման N Պ-708 պայմանագիրը և <<ՍԱՐԺ ԳՐՈՒՊ>> սահմանափա պատասխանատվությամբ ընկերության գործադիր տնօրենի 2023 թվականի սեպտեմբերի 11- դիմումը.

Որոշմամբ նախատեսվում է համայնքի սեփականությանը հանդիսացող արդյունաբերությա ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակայի նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնակա նշանակության 08-022-0152-0019 կադաստրային ծածկագրով **6.99513 հեկտար** հողամաս (Վկայական N 07092023-08-0005) տուֆ քարի արդյունահանում կազմակերպելու նպատակով 2 (քսան) տարի ժամկետով (մինչև՝ 2043 թվականի սեպտեմբերի 28-ը), **350 000 (երեք հարյուր հիսու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ** տարեկան վարձավճարով վարձակալությա տրամադրել «<<ՍԱՐԺ ԳՐՈՒՊ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանո որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-022-0152-0019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 6.99513 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՈՒՖ ՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՍԱՐԺ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 13-րդ հոդվածի 6

րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվական ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացո հողամասերի տրամադրման կարգի>> 44-րդ կետի <<ը>> ենթակետի դրույթներով, հիմք ընդունելո Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 202 թվականի հունիսի 20-ի <<ՍԱՐԺ ԳՐՈՒՊ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի տրամադրման մասին>> թիվ 1111-Ա հրամանը, <<ՍԱՐ ԳՐՈՒՊ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետև՝ ընկերություն) տրամադրվա օգտակար հանածոյի արդյունահանման 2023 թվականի հունիսի 20-ի ՇԱԹ-29/708 թույլտվությունը, N Լ-70 լեռնհատկացման ակտը և Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով կնքված 2023 թվական հունիսի 20-ի ընդերքօգտագործման N Պ-708 պայմանագիրը և հաշվի առնելով <<ՍԱՐԺ ԳՐՈՒՊ> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր տնօրենի 2023 թվականի սեպտեմբերի 11- դիմումը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի վարչակա տարածքում գտնվող /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Բագրավան, 17-րդ փողոց, 10/1 հողամաս համայնքի սեփականությանը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրակա նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրվա հողամասերի գործառնական նշանակության 08-022-0152-0019 կադաստրային ծածկագրով **6.99513 հեկտա** հողամասը (Վկայական N 07092023-08-0005) տուֆ քարի արդյունահանում կազմակերպելու նպատակով 2 (քսան) տարի ժամկետով (մինչև՝ 2043 թվականի սեպտեմբերի 28-ը), **350 000 (երեք հարյուր հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ** տարեկան վարձավճարով վարձակալության տրամադրել «<<ՍԱՐ ԳՐՈՒՊ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետև՝ ԸնկերությունՊետակա միասնական գրանցման համար 48.110.1245019, 2022-06-17, ՀՎՀՀ 05555443, գործադիր տնօրեն՝ Ժորա Անուշավանի Գևորգյան, անձնագրային տվյալներ՝ 009014879, 2018-02-06, 022-կողմից, հասցե՝ մարզ Շիրակ Անի համայնք, գյուղ Բագրավան, 5-րդ փողոց, տուն 5):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերության հետ կնքել սույ որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի վարձակալության պայմանագիր:

3. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվա կարգով ենթակա են պետական գրանցման՝ Ընկերության միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Զեկուցողը անցավ օրակարգի հաջորդ հարցին:

**Օրակարգ-16**

**16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԲԱԳՐԱՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-022-0109-0020 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.04 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարմա մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստան

Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 192 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխա հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակմ փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի>> 60-րդ կետի դրույթնե և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի դեկտեմբերի 29- 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինակ ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչակ հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 8-ի N 2/փ-285 դրական եզրակացությունը.

Որոշմամբ նախատեսվում է հաստատել Անի համայնքի Շիրակ-1 միկրոռեգիոնալ մակարդա համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Բագրավան բնակավայ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում առանձին հողամասի նպատակային նշանակությ փոփոխության մասով գլխավոր հատակագծում հողամասի նպատակային նշանակությ փոփոխությունը, որով նախատեսվում է Անի համայնքի Բագրավան բնակավայրի վարչակ սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն համարվող 08-022-0109-0020 կադաստրայ ծածկագրով 0.04 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտ հողատեսլ հողամասը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքնեւ օբյեկտների հողերի կատեգորիա, կապի օբյեկտների գործառնական նշանակություն՝ Անի համայնք Բագրավան բնակավայրի բջջային հեռախոսակապի ծածկույթի բարելավման նպատակով, այ հողամասում բջջային կապի կայան տեղադրելու համար՝ հողամասը օրենքով սահմանված կարգո օտարելու համար:

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանո որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԲԱԳՐԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-022-0109-0020 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.04 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-ր ոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետությա կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստան Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցվա տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցմա հաստատման ու փոփոխման կարգի>> 60-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստան Հանրապետության վարչապետի 2010 թվականի դեկտեմբերի 29-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծվա Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր

մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվակ սեպտեմբերի 8-ի N 2/փ-285 դրական եզրակացությունը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրա միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառ Բագրավան բնակավայրի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում առանձին հողամ նպատակային նշանակության փոփոխության մասով գլխավոր հատակագծում հողամ նպատակային նշանակության փոփոխությունը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետությ Շիրակի մարզի Անի համայնքի Բագրավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվ համայնքի սեփականություն համարվող 08-022-0109-0020 կադաստրային ծածկագրով 0.04 գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտ հողատեսքի հողամասը փոխադ էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողի կատեգորիա, կապի օբյեկտների գործառնական նշանակություն՝ Անի համայնքի Բագրավ բնակավայրի բջջային հեռախոսակապի ծածկույթի բարելավման նպատակով, այդ հողամաս բջջային կապի կայան տեղադրելու համար՝ հողամասը օրենքով սահմանված կարգով օտարե համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին

ա) հողամասի նպատակային նշանակության սույն որոշման 1-ին կետով նախատեսված փոփոխությա պայմանավորված ապահովել հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

բ) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառմա տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն

գ) Սահմանված կարգով և ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարությա 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությա համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորմա փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխմա կարգի>> 22-րդ և 23-րդ կետերով սահմանված պահանջների կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Զեկուցողը անցավ օրակարգի հաջորդ հարցին:

**Օրակարգ-17**

**17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ /ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ/ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՎՐՈՒՅՐ ԳԱԼՈՒՍՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարմա

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստան Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատվա «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով և հաշվ առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Վրույր Գալուստի Գևորգյանը, ի 2023 թվականի սեպտեմբերի 19-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետությա օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Անի համայնքի սեփականություն համարված **5.37** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ շինությունը (պարիսա և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետությա Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակայի նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0018-003 կադաստրային ծածկագրով **0.00275** հեկտար մակերեսով հողամասի (Վկայական 15092023-08-0015 անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, Նոր թաղամաս, 6-րդ փողոց 15/3 պարիսա ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը, որոշմամբ նախատեսվում է օրինակա ճանաչված և համայնքի սեփականությունը համարված **5.37** քառակուսի մետր արտաքին մակերեսո բնակելի օժանդակ շինությունը (պարիսպ) և նրա պահպանման ու սպասարկման համա նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությու հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատմա գործառնական նշանակության 08-003-0018-0030 կադաստրային ծածկագրով **0.00275** հեկտա մակերեսով հողամասը (Վկայական 15092023-08-0015, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Ան համայնք, Նոր թաղամաս, 6-րդ փողոց 15/3 պարիսպ) գնման նախապատվության իրավունքո ուղղակի վաճառքով **32821 (երեսուներկու հազար ութ հարյուր քսանմեկ) Հայաստան Հանրապետության դրամ** արժեքով վաճառել կառուցապատողին

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանո որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ /ՔԱՂԱՔ ՄԱՐԱԼԻԿ/ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ՎՐՈՒՅՐ ԳԱԼՈՒՍՏԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 200 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացմա և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ ինքնակամ շինություն իրականացրած քաղաքացի Վրույր Գալուստի Գևորգյանը, իր 2023 թվականի սեպտեմբերի 19- դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգո օրինական ճանաչված և Անի համայնքի սեփականությունը համարված **5.37** քառակուսի մետ արտաքին մակերեսով բնակելի օժանդակ շինությունը (պարիսպ) և նրա պահպանման ո սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ան համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակել կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0018-0030 կադաստրային ծածկագրո **0.00275** հեկտար մակերեսով հողամասի (Վկայական 15092023-08-0015, անշարժ գույքի հասցեն մարզ Շիրակի, Անի համայնք, Նոր թաղամաս, 6-րդ փողոց 15/3 պարիսպ) ուղղակի վաճառքո գնման նախապատվության իրավունքը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
**որոշում է**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ օրինական ճանաչված համայնքի սեփականությունը համարված **5.37** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ շինությունը (պարիսպ) և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0018-0030 կադաստրային ծածկագրով **0.00275** հեկտար մակերեսով հողամասը (Վկայական 15092023-08-0015, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, Նոր թաղամաս, 6-րդ փողոց 15/3 պարիսպ) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով **32821 (երեսուներկու հազար ութ հարյուր քսանմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ** արժեքով վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Վրույր Գալուստի Գևորգյանին (անձնագիր՝ AT 0533658, տրված՝ 04.08.2020 թ. 012-ի կողմից, հաշվառման հասցե՝ ք. Երևան, Ֆուչիկի փողոց, շենք 25/2, բն.8, հետագայում՝ Քաղաքացի):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Քքաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ Քաղաքացու միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Զեկուցողը անցավ օրակարգի հաջորդ հարցին:

**Օրակարգ-18**

**19) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Զեկուցողը նշեց, որ Անիի ամայնքապետարանի աշխատակազմի կողմից աշխատանքներ են տարվում համայնքի զարգացման 2023-2027 թվականների ծրագրի մշակման ուղղությամբ:

ՀԶՀԾ-ն մշակվում է մասնակցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները, Անի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների նախընտրական քարոզարշավի ընթացքում համայնքի բնակչության կողմից բարձրացված հրատապ լուծում պահանջող խնդիրներն ու պատվիրանները:

Հանրային բաց լսումների և քննարկումների միջոցով անհրաժեշտ է վեր հանել համայնքի բնակիչներին հուզող խնդիրները, դրանք գնահատել և դասակարգել ըստ առաջնահերթության և հրատապության:

Ծրագրում պետք է ուղենշվեն Անի համայնքի առաջիկա 5 տարիների զարգացման տեսլականը, զարգացման հիմնական ուղղություններն ու գերակա ոլորտները: <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, ծրագրում պետք է ներառել համայնքի բոլոր պարտադիր խնդիրները և դրանց լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը, համայնքի սեփականություն համարվող շենքերի, շինությունների ու հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը:

Տեղեկացվեց, որ զարգացման ծրագրում ներառվել են նաև ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ (ԱՌՆԱՊ) հիմնադրամի կողմից Անի համայնքում 2022-2023 թթ. իրականացված «Տեղական մակարդակում կլիմայական ռիսկերի գնահատում» ծրագրի

շրջանակներում իրականացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի միավորվա համայնքի կլիմայական ռիսկերի գնահատման հաշվետվությունում վերլուծված համայնքին սպառնացող վտանգները, վերջիններիս ռիսկերին դիմակայելու հնարավոր լուծումները, ինչպես նաև համայնքի խոցելիության, ռիսկերի գնահատման արդյունքները, ինչպես նաև ըստ բնակավայրերի ո խոցելի ոլորտների, վերջիններիս դիմակայելու հնարավոր լուծումները:

Ծրագրային առաջարկություններ ներկայացնելու նպատակով հարցը քննարկվել է համայնք վարչական ղեկավարների հետ և արձանագրվել են բոլոր այն խնդիրները որոնք ունեն ծրագրայի բնույթ և հրատապ լուծում են պահանջում:

Առաջիկայում նախատեսվում համայնքի զարգացման ծրագիրը քննարկել համայնքի ղեկավարի կից ստեղծված խորհրդակցական մարմինների և համայնքի ավագանու մշտական գործո հանձնաժողովի հետ: Այնուհետև կանցկացվեն հանրային քննարկումներ, կամփոփվեն արդյունքներ և ծրագրի նախագիծը կներկայացվի համայնքի ավագանու քննարկմանը:

Առաջարկվեց ավագանու անդամներին ակտիվ մասնակցություն ունենալ նշված քննարկումների և առաջարկություններ ներկայացնել համայնքում առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղվա ծրագրերի վերաբերյալ:

Արտահայտվեցին՝ ավագանու անդամներ Է. Ոhռոտյանը, Հասմիկ Զատիկյանը և Ժիրա Ալեքյանը: Արահայտվողները պատրաստակամություն հայտնեցին ակտիվ մասնակցություն ունենա նշված քննարկումներին և առաջարկություններ ներկայացնել համայնքում առկա հիմնախնդիրներ լուծմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ:

**Ելնելով քննարկման արդյունքներից համայնքի ավագանին արձանագրեց.**

1. Հանրային բաց լսումների և քննարկումների միջոցով վեր հանել համայնքի բնակիչների հուզող խնդիրները, դրանք գնահատել և դասակարգել ըստ առաջնահերթության հրատապության:
2. Համայնքի զարգացման ծրագիրը քննարկել համայնքի ղեկավարին կից ստեղծվա խորհրդակցական մարմինների և համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողու հետ: Անցկացնել հանրային քննարկումներ, ամփոփել արդյունքները և ծրագրի նախագիծ ներկայացնել համայնքի ավագանու քննարկմանը:
3. Ակտիվ մասնակցություն հանդես բերել համայնքի 2023-2027 թվականների զարգացմա հնգամյա ծրագրի մշակման, քննարկման և հաստատման գործընթացին:

Համայնքի ավագանու նիստը ամփոփեց Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանը հայտարարեց, որ ավագանու հերթական նիստի օրակարգի հարցերը սպառված են, նիստ հայտարարվեց փակված:

Շնորհակալություն հայտնվեց նիստի մասնակցության համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | Կողմ- 11 | Դեմ – 0 | Ձեռնպահ – 0 |
|---|---|---|---|
| **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ** | ____________ | ____________ | ____________ |
| **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ** | ____________ | ____________ | ____________ |
| **Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ** | ____________ | ____________ | ____________ |
| **Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ** | ____________ | ____________ | ____________ |
| **Ա. ՇԱԲՈՅԱՆ** | ____________ | ____________ | ____________ |
| **Հ. ՁԱՏԻԿՅԱՆ** | ____________ | ____________ | ____________ |
| **Ժ. ԱԼԵՔՅԱՆ** | ____________ | ____________ | ____________ |
| **Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ** | ____________ | ____________ | ____________ |
| **Ն. ՍԱՐՈՅԱՆ** | ____________ | ____________ | ____________ |
| **Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ** | ____________ | ____________ | ____________ |
| **Մ. ԵՆՈՔՅԱՆ** | ____________ | ____________ | ____________ |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

**Արձանագրեց՝**

**ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի**
**աշխատակազմի քարտուղար՝**
**Հ. Համբարյան** ____________

<<28>> սեպտեմբերի 2023 թ.
քաղաք Մարալիկ